ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
N ՄՄ- 03/22

Ք.Եղեգնաձոր 19.12.2022թ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը, ի դեմս Գլխավոր քարտուղար Ա.Կարապետյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ (Պետական մարմին), մի կողմից և Եղեգնաձորի երաժշտական դպրոց ՊՈԱԿ-ը՝ ի դեմս տնօրեն Ա.Կարապետյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ (Կազմակերպություն), մյուս կողմից, այսուհետ միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված «Մարզերի մշակութային զարգացման ծրագրի»(ծրագրի դասիչ՝ 1196) շրջանակներում նախատեսված ընթացիկ դրամաշնորհը(այսուհետև՝ դրամաշնորհ) և ղեկավարվելով ՀՀ կառավարության 23.12.2021թ N 2121-ն որոշմամբ՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պետական մարմինը պարտավորվում է ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի 08.02.05.04. «Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման շրջանակներում «Տարեմուտի հանդես» մշակութային միջոցառման իրականացման նպատակով սույն պայմանագրի 2.1. կետում նշված միջոցները հատկացնել Կազմակերպությանը, իսկ Կազմակերպությունը ստանձնում է համապատասխանաբար 2022 դեկտեմբերին իրականացնել միջոցառումը (շահառուների ընդհանուր թվաքանակը՝ 500-600 մարդ) համաձայն կից նկարագրի և նախահաշվի :

2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրով նախատեսված միջոցառման ընդհանուր գինը կազմում է 636000/վեց հարյուր երեսունվեց հազար) / ՀՀ դրամ ,այդ թվում ԱԱՀ-ն՝ 106000

2.2 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Պետական մարմինը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը փոխանցում է Կազմակերպության գանձապետական հաշվին:

3.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.2 Կազմակերպությունը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Պետական մարմնի ներկայացուցչի հնարավորությունը:

3.3 Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնել հաշվետվություններ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի թիվ 104-Ն հրամանի և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններին առընչվող այլ իրավական ակտերի:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 26-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վայոց Ձորի մարզպետարան
Ք.Եղեգնաձոր Շահումյան 5
ՀՀ ֆն գործառնական վարչություն
ՀՀ 900351 79026

ՀՎՀՀ 08907717

_____Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Եղեգնաձորի երաժշտական դպրոց ՊՈԱԿ
Ք.Եղեգնաձոր Շահումյան 9
ՀՀ ֆն գործառնական վարչություն
ՀՀ 900358000314

ՀՎՀՀ 08900681

_____Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

Ամանորյա տոնական միջոցառումը նախատեսված է անցկացնել դեկտեմբերի 24-ին, ժամը 12:00-ին, Եղեգնաձորի երաշժտական դպրոցի հարակից հրապարակում: Կտեղադրվի տոնածառ և կլինեն ամանորյա զարդարանքներ:

Որպես միջոցառման անմիջական մասնակիցներ ներկա կլինեն Ձմեռ պապիկն ու Ձյունանուշիկը, կլինեն երաշժտական կատարումներ, պարերգեր, իսկ վերջում նախատեսվում է միջոցառմանը ներկա գտնվող մոտ 500 փոքրիկների բաժանել ամանորյա հավաքածուներ:

Ծրագրի նպատակն է փոքրիկների համար ամենասպասված այս գեղեցիկ օրը ոչ միայն ուրախացնել, այլ նաև տոն դարձնել:

Շահառուների թիվը կկազմի 500-650 անձ, որում իրենց ընդգրկվածությունը կունենան Եղեգնաձոր քաղաքի հանրակրթական դպրոցներից առաջին, երկրորդ դասարանների երեխաներ, Եղեգնաձորի երաշժտական դպրոցից երեխաներ և քաղաքից միջոցառմանը ներկա այլ երեխաներ:

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ծախսի անվանումը	Գումարը
1. Ձմեռ պապ	45 000 հհ դրամ
2. Սցենարի նախապատրաստում	40 000 հհ դրամ
3. Նվերներ /500 հատ/	260 000 հհ դրամ
4. Ռադիոսպասարկում	30 000 հհ դրամ
5. Կազմակերպիչ	45 000 հհ դրամ
6. Հաղորդավար	30 000 հհ դրամ
7. Պարի համույթ	40 000 հհ դրամ
8. Մուլտհերոս	40 000 հհ դրամ
Ընդ.	530 000 հհ դրամ

Կազմեց ԵԴՄ ՊՈԱԿ-ի տնօրեն Արթուր Կարապետյանը